

Թիւ 25984

Օգոստոս 15, 1978

Մեծայարգ
Տիար Ղեւոնդ Շահմելիբեան
Թորոնթօ.

Յարգելի Տիար Շահմելիբեան,

Թորոնթոյի մեր համայնքին մէջ երկրորդ ծուխ մը հաստատելու աշխատանքներու կապակցութեամբ՝ հրահանգած ենք որ Առաջնորդի Փոխանորդ եւ Թեմական Խորհուրդի փոխ-գանձապահ Հոգ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեանի նախագահութեամբ խորհրդակցական ժողով մը գումարուի Երեքշաբթի Օգոստոս 29, 1978, երեկոյեան ժամը 8.00ին՝ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ: Սոյն ժողովին հրաւիրած ենք Եկեղեցւոյ Եփական Խորհուրդը եւ համայնքիս օգտաշատ ազգայիններէն մի քանի անձեր:

Այսու գիրով կը հրաւիրենք ձեզ մասնակցելու սոյն ժողովին, որուն գլխաւոր օրակարգը պիտի ըլլայ ծրագրումը օրինական այն քայլերուն որոնք պիտի առնուին Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի հաւանութեամբ, կազմակերպելու համար երկրորդ ծուխ մը Թորոնթոյի մեր համայնքին մէջ:

Կը յուսանք որ նկատի ունենալով վերոյիշեալ թուականը ներկայ կը զանուիք ժողովին, ձեր օգտակար թելադրութիւնները բերելու խորհրդակցութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ